| Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից | այո | | *(Ուսուցիչների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, այդ թվում ՝ ԿԱՊԿ ունեցողների, ծնողների, և վարչական կազմի շրջանում)* |
| Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում | այո | | *(Կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտաբերելու ուսուցիչների ունակությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, այդ թվում ՝ ԿԱՊԿ ունեցողների, ծնողների, ինչպես նաև վարչական կազմի շրջանում)* |
| Ուսումնական հաստատությունն իրականացնում է սոցիալական | այո | | *(Եթե այո, ապա նկարագրել, թե ինչպիսի սոցիալական* |

| | | | |
|---|---|---|---|
| աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար | | | *աջակցության ծրագրեր է իրականացնում հաստատությունը սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար,այդ ծրագրերին մասնակից սովորողների թիվը և այլն:)* |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունները | | - | *(նկարագրել հաստատության սովորողների այն որոնք ուղղված են ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանը)* |

*Դպրոցում սովորող աշակերտներից ոչ մեկը չունի համապատասխան փաստաթուղթ ներառական կրթության մեջ ընդգրկվելու մասին: Մինչդեռ կան երեխաներ , որոնք պետք է անցնեն բժշկա-հոգեբանական ստուգում և անհրաժեշտության դեպքում ընդգրկվեն ԿԱՊԿՈՒ ցուցակում: Այստեղ գերիշխում են ծնողների կարծրատիպը նման երեխաների վերաբերյալ, որը և խնդիրներ է առաջացնում դպրոցի համար: Դպրոցը անցել է համընդանուր ներառական կրթության և կապ հաստատելով տարածքային ՏՄԱԿ-ի հետ ուսուցչի օգնականների օգնությամբ իրականացնում է ԿԱՊԿՈՒ աշակերտների դիտարկում կանխարգելիչ պլանների մշակում և պլանների ն համապատասխան կրթություն:Բոլոր դեպքերում դպրոցական շենքը չունի ներառական կրթություն իրականացնելու համար համապատասխան պայմաններ: Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ , դպրոցը ունի հոգեբանի հաստիք , ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության կարծրատիպերի առկայությունը , պատրաստ են անհրաժեշտ գործունեություն ծավալել դրանց վերացման ուղղությամբ , սակայն նախ և առաջ դպրոցում անհրաժեշտ է ստեղծել համապատասխան շենքային պայմաններ, անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ , հարմարանքներ և պարագաներ:*

*Աղյուսակ 29. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ*

| Ցուցանիշ | 2019 - 2020 ուս տարի | 2020 - 2021 ուս տարի | 2021 - 2022 ուս տարի |
|---|---|---|---|
| Հաստատության ռեսուրս-սենյակ այցելողԿԱՊԿունեցող սովորողների թիվը և տոկոսը*(ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողներիտոկոսըհաշվարկել ԿԱՊԿունեցողսովորողներիընդհանուրթվի նկատմամբ)* | - | - | **0.23** |
| Հաստատության ռեսուրս-սենյակայցելողԿԱՊԿունեցողսովորողներիծնողների (խնամակալների) թիվը | - | - | **0.23** |
| Հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն ԿԱՊԿ *(ԿԱՊԿ ունեցողսովորողների թիվը և տոկոսը հաշվարկել ըստ հաշմանդամության և կարիքների տիպերի՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի նկատմամբ).* | - | - | -0.23 |
| Հաստատությունից հեռացած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը *(ուսումն անավարտ թողած ԿԱՊԿ ունեցող սովորողների տոկոսը հաշվարկել ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվի նկատմամբ)* | - | - | *0.23* |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ ժամ/սովորող | - | - | *175* |
| Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը | - | - | |
| Ուսումնականան հաստատության աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունների թիվը տվյալ ուստարում | - | - | - |
| Հաստատության վեբ կայքում և (կամ) աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, լուսանկարների, և այլ հրապարակումների թիվը | - | - | - |
| Սեռերի հավասարության գործակիցը<br>*(հաշվարկ. հաստատությունում սովորող աղջիկների ընդհանուր թվի հարաբերությունը տղաների ընդհանուր թվին)* | - | - | - |
| Աշակերտականխորհրդումսեռերիհավասարությանգործակիցը<br>*(հաշվարկ.աշակերտական խորհրդում ընդգրկված աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին)* | - | - | - |
| Գերազանցտարեկանառաջադիմությունունեցողտղաներիթվիհարաբերությունըգերազանցտարեկանառաջադիմությունունեցողաղջիկներիթվին | - | - | - |
| Տարեկանանբավարարգնահատական (գնահատականներ) ունեցողտղաներիթվիհարաբերությունըտարեկանանբավարարգնահատական (գնահատականներ) ունեցողաղջիկներիթվին | - | - | - |
| Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով) | - | - | - |
| «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա»և«Կենսաբանություն»առարկաներիցտղաներիևաղջիկներիտարեկանմիջինառաջադիմությունը | - | - | - |
| Հաստատությունումսովորողազգայինփոքրամասնություններիերեխաներիթիվըևտոկոսը<br>*(ազգայինփոքրամասնությունների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)* | - | - | - |
| Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը | - | - | - |
| Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը *(անվճար դասագրքեր ստացող սովորողների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)* | - | - | - |
| Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը *(անվճար սնունդստացողսովորողների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)* | - | - | - |
| Սոցիալապեսանապահովընտանիքներիցսովորողներիհամարհաստատությանիրականացրածսոցիալականաջակցությանծրագրերի թիվը տվյալ ուստարում | - | - | - |
| Հաստատության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի թիվը | - | - | - |
| Հաստատությանկողմիցիրականացված՝ ներառականկրթությաննառնչվողարտադասարանականմիջոցառումների (զրույցներ, կինոնկարներիդիտում, քննարկումներ, կլորսեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներևայլն) թիվը՝ըստդասարանների | - | - | - |

*Ամփոփել ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովմանուղղությամբ հաստատության հիմնական ցուցանիշները, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ:*

*Դպրոցում գործում է համընդհանուր ներառական կրթություն : Դիտարկման արդյունքում ԿԱՊԿՈՒ վկայագրված աշակերտներ չեն գրանցվել: Դիտարկվող աշակերտների հետ տնօրենությունը,ուսուցիչները և ուսուցչի օգնականները աշխատել են յուրաքանչյուր աշակերտի վերաբերյալ կազմված կանխարգելիչ պլաններին համապատասխան:*

***Աղյուսակ 30. Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ***

| Ցուցանիշ | 2019-2020ուս տարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցությունն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը | *2* | *1* | *2* |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը | *4* | *4* | *4* |
| Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը | *5* | *2* | *10* |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը | *2* | *1* | *4* |

Նկարագրել, թե ինչպես է տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը

*Հարցը* նախ քննարկվում է դասարանական խորհրդում,ապա դասղեկի , տնօրենության,ՄԿԱ-ի և ԴԱԿ-ի օգնության կազմվում է աշխատանքային պլան, անհրաժոշտության դեպքում ընդգրկվում են մանկավարժներ , հոգեբան,համայնքի ներկայացուցիչներ , համապատասխան մասնագետներ:

Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից ընդունած որոշումներին և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

| | | | |
|---|---|---|---|
| Նկարագրել վերջին 3 տարում քննարկված խնդրահարույց հարցերը և ընդունված որոշումները | 2020<br>2021<br>2022 | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ<br>9 | Մեկնաբանությ ուն<br>Քննարկվել են ուսման մեջ առաջադիմությ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ան Կարգապահական Շրջակա միջավայրի մաքրության պահպանության Կանաչապատման և կազմակերպական մի շարք հարցեր |
| 1.Դպրոցում աշակերտների կողմից բջջային հեռախոսների օգտագործման հարցը | 2021թ սեպտեմբեր | 45 | Դպրոցի տնօրենությունը գտել է որ բջջային հեռախոսների օգտագործումը դպրոցում խանգարում է ուսումնադաստիարակչական աշխատանքում |
| 2.,,Վերջին զանգի արարողության կազմակերպում ,, | Մայիս 2021թ 2022թ | 0.07 0.08 0.08 | Չնայած ծնողների և աշակերտների ցանկությանը որոշում է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընդունվել <<Վերջին զանգի>> արարողությունը կազմակերպել միայն աշակերտների, ուսուցիչների և ծնողների շրջանակում, հիմնովին արգելելով դրամահավաքությունը |
| 3. | | | |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները | Ամսաթիվ 2021-22ուստարի | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ 12 | Մեկնաբանություն Խրախուսել միջազգային մրցույթներում, օլիմպիադաներում և այլ մրցույթներում հաղթանակով վերադարձած աշակերտներին |

| | | | |
|---|---|---|---|
| 1.Ավագ դպրոցի աշակերտները նախաձեռնել են դպրոցամերձ այգում այգեթաղ կազմակերպել իրենց ուժերով: | 2021, նոյեմբեր | *16-18տոկոս* | *Դպրոցը ունի դպրոցամերձ հողամաս: Դպրոցը չունի այգեպանի հաստիք և խաղողի այգու աշխատանքները խնդիրներ են առաջացնում դպրոցի համար:* |
| 2.Միջին դպրոցի աշակերտները նախաձեռնել են ստանձնել գյուղի կենտրոնում գտնվող հուշարձանների խնամքը: | 2022թ. ապրիլ | *55տոկոս* | *Աշակերտները սիրով են մասնակցում Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի խնամքի և նրա կից տարածքի բարեկարգմանը:* |
| 3.Դպրոցական բակի բարեկարգում | 2021-22ուս ընթացք | *35տոկոս* | *Աշակերտների ուժերով դպրոցական* |

| | | | |
|---|---|---|---|
| | ում | | *բակում ստեղծվել են ծաղկանոցներ:* |
| | | | |
| | | | |
| Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը. | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպվածմիջոցառումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի ն կատմամբ | Համադպրոցական կամդասարանային |
| 1.<<Առաջին զանգ>> միջոցառման կազմակերպում | 2021թ. սեպտեմբեր 2022թ օգոստոս | *90 տոկոս* | *համադպրոցական* |
| 2.Ավարտական երեկոյի կազմակերպում | Հունիս 2021թ 2022թ. հունիս | *25տոկոս* *25տոկոս* | *Դասարանային* *դահլիճ* |
| 3.Երեխաների միջազգային օրվան նվիրված միջոցառում | Հունիս 2021 | *60 տոկոս* | *համադպրոցական* |
| 4.Ծնողների համար գեղարվեստական ինքնագործնեության համերգ ապրիլի 7-ի կապակցության | Ապրիլ 2022թ | *40 տոկոս* | *համադպրոցական* |

| | | | |
|---|---|---|---|
| 4. 12-րդ դաս աշակերտները վերանորոգեցին իրենց դասասենյակները: | 2022թ. մայիս | *10 տոկոս* | *համաղասարանային* |
| Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը սովորողների մասնակցության դեպքերը | Ամսաթիվ 2021-22ուս ընթացքում | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ 15 | Մեկնաբանություն Խիստ նկատողություն տալ հաճախակի բացակայող աշակերտներին ,սահ |
| 1.Աշակերտական համազգեստի մասին որոշում | 2021թ | *50* | *Որոշեցին դպրոց հաճախել աշակերտական համազգեստով:* |
| 2.Բջջային հեռախոսների օգտագործման մասին | 2021թ | *35* | *Որոշեցին սահմանափակել դպրոցում բջջային հեռախոսների անհարկի օգտագործումը:* |
| 3.Անհարգելի ուշացումների,բացակայությու | 2022 մարտ | *45 տոկոս* | *Որոշեցին աշխարհի* |

| | | | |
|---|---|---|---|
| ների կանխման մասին որոշում<br><br>4.Ավագ դպրոցի աշակերտները օգնում են ուսուցիչներին բակի և միջանցքի հերթապահության հարցում: | <br><br>2021-2022ուս | <br><br>*8 տոկոս* | *ուժերով ամենօրյա վերահսկողություն սահմանել հաճախակի բացակայող և ուշացող աշակերտների վարքին:* |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |
| Թվարկել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, նշել դրանց թեմաները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
| | | | |
| *Դպրոցի աշակերտական կոլեկտիվում տիրում է համերաշխ, փոխըմբռնման մթնոլորտ: Նրանք գրեթե բոլորը նույն համայնքի բնակիչներ են և բացի համադասարանցիներ և նույն դպրոցի աշակերտներ լինելուց, կապված են նաև* | | | |

| |
|---|
| *ազգակցական կապերով: Ավագ դպրոցի սովորողները,որոնք մասնակցում են դպրոցի ամենօրյա հերթապահությանը , առանձնակի ուշադրություն և հոգատարություն են ցուցաբերում կրտսեր դպրոցի սաների նկատմամբ:*<br><br>*Սովորողները ուսուցիչների նկատմամբ հարգալից վերաբերմունք ունեն: Դասապրոցեսում,ուսումնադաստիարակչական աշխատանքներում, կոնֆլիկտային իրավիճակներ չեն առաջանում:* |

*Դպրոցի տնօրենությունը օժանդակում է աշակերտների կողմից եղած նախաձեռնությունների կատարմանը: 2017-18 ուստարում սովորողները հանդես են եկել 3 նախաձեռնությամբ, Սովորողների կազմակերպված միջոցառումներին մասնակցում են աշակերտների թվի 50-ից մինչև 90 տոկոսը: Սովորողները մասնակցում են հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը:Նրանց նախաձեռնությամբ և նրանց կողմից է ստեղծվել աշակերտների վարքի կանոնների վերաբերյալ ստենդը:*

*Սովորողների կողմից եղած բոլոր նախաձեռնություններն ուղղված են եղել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը:Աշակերտների կողմից կազմակերպված միջոցառումների որակական մակարդակը աստիճանաբար բարձրացել է:*

***Աղյուսակ 31. Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ***

| Ցուցանիշ |
|---|
| ՈՒս. տարվա սկզբին դպրոցում ձևավորվում է աշակերտական խորհուրդը, որը ուս. |

<table>
<tr><td colspan="4">տարվա ընթացքում ակտիվ աշխատանքներ է տանում դպրոցում: Դասարանական ժողովների արդյունքում ձևավորված դասարանական աշխորհի նախագահներից ստեղծվեց դպրոցական աշխորհը, որը բաղկացած է 22 անդամներից: Փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվեց աշխորհի նախագահ և քարտուղար: Տարվա ընթացքում աշխորհի անդամների ջանքերով կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ, շաբաթօրյակ, որի արդյունքում մաքրվեց դպրոցի շրջապատը, կատարեցին ծառատունկ: Աշխորհի աշխատանքը կազմում է դպրոցական գործի մի մասը և իր նպատակային և բարերար ազդեցությունը ունի ընդհանուր գործընթացի վրա:</td></tr>
<tr><td colspan="4">Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.</td></tr>
<tr><td>Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.</td><td>Ամսաթիվ<br>03/10/20թ.</td><td>Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ</td><td>Մեկնաբանություն<br>Աջակցել են Արցախից եկած աշակերտներին և ընտանիքներին</td></tr>
<tr><td>1.Անցկացվել է աշակերտական խորհրդի նիստ,քննարկվել գիտելիքի յուրացման,ուսման որակի հարցեր</td><td>2021-22ուս ընթացքում.</td><td>10%</td><td>Քննարկվել են ավագ դպրոցում ուսման մեջ ետ մնացող աշակերտների հարցերը:</td></tr>
<tr><td>2.Անցկացվել է աշխորհի նախագահի ընտրություն</td><td>24.09.2021թ.</td><td></td><td>Նախագահ է ընտրվել Լարիսա Օնիկի Ղազարյանը</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>

| Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով | | | |
|---|---|---|---|
| Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով | Ամսաթիվ 23.12.21թ. | Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ 2 | Մեկնաբանություն Տարվել է զրույց այդ աշակետների հետ |
| 1Աշխորհի նիստերի ժամանակ քննարկվել են զեկուցումներ<<Թրաֆիքինգ>>,<< Թմրամոլությունը մեծագույն չարիք է >>թեմաներով | 2021-22ուս ընթացքում | *աշխորհ* | |
| 2.Աշակերտական խորհրդի նիստում քննարկվել է 9-րդ դաս. աշակերտ Ս.Հարությունյանի և 10-րդ դաս. աշակերտ Վ.Ազատյանի վարքագիծը | 2022թ մարտ | *0.3* | *Տղաները հաճախակի են բաց թողնում դասերը* |
| | | | |
| | | | |
| Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները.՝ ներառյալ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները | Ամսաթիվ 2020 2021 2022 | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն Աշխորհի անդամները ակտիվ մասնակցություն են ունենում ուստարվա ընթացքում դպրոցում կազմակերպվող միջոցառումների ընթացքում |
| 1.Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում | 31.08.2021թ | 1-ին և 12-րդ դասարանի աշակերտներ | 1-ին և 12-րդ դասարանի աշակերտները դասղեկների,դասվարների ,Դակ Մ.Հախվերդյանի ղեկավարությամբ անցկացրեցին Գիտելիքի օրվան |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նվիրված միջոցառում |
| 1.մասնակցել են <<Սանիտարահիգիենիկ մաքրման օրեր համայնքում >>ծրագրի շրջանակներում մեր աշակերտները և դպրոցի ողջ անձնակազմը ակտիվորեն մասնակցել է մաքրման աշխատանքներին,նպաստել մաքուր և կանաչապատ միջավայր ստեղծելու գործին: | 2022թ. մարտ<br><br>մայիս | 90 | *1-12-րդ դաս աշակերտները մասնակցել են դպրոցական շենքի ,բակի մաքրմանը:* |
| | | | |
| .3. Դպրոցամերձ տարածքի մաքրում | 2022թիվ գարուն, | *40* | *Մասնակցել են 7-12-րդ դաս աշակերտները:* |
| | | | |
| 5.Դասասենյակների կանաչապատման միամսյակ | 2022թ գարուն | *90* | *1-12-րդ դաս աշակերտները կանաչապատել են իրենց դասասենյակնե րը:* |

| | | | |
|---|---|---|---|
| 7. Դպրոցի միջանցքների կանաչապատման միամսյակ | 2021-22ուս. | *90* | *1-12-րդ դաս աշակերտները սենյակային բույսեր են աճեցրել և դրանցով կանաչապատել դպրոցի միջանցքները:* |
| 8. ,, ՌԻսուցչի տոն,, միջոցառում | 2021թ հոկտեմբեր | *9 տոկոս* | *Աշխոռիհի անդամները օգնել են կազմակերպական հարցերում* |
| 9.Գրադարանավարներին նվիրված օր | 07.10.2021թ | | *Աշխոռիհի անդամները հանդիպում և մուլտդիտում էին կազմակերպել գրադարանում դպրոցում գործող զարգացման կենտրոնի սաների հետ* |
| 9. Նոր տարվա կապակցությամբ դպրոցի | 2021թ Դեկտեմ | *7 տոկոս* | *Աշխոռիհի անդամները* |

| | | | |
|---|---|---|---|
| կահավորում:<br>10. Նոր տարվա դիմակահանդես<<Կախարդական խոսքեր>> | բեր<br><br>24.12.2021թ | *8տոկոս* | *զարդարել են դպրոցի միջանցքները,դասարանական խորհրդի անդամները ձևավորել են իրենց դասասենյակները և օգնել տոնածառի զարդարման ժամանակ* |
| 11. Մոմավառություն 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված | 2022 հունվար | *25տոկոս* | *Ամեն տարի աշակերտները ծաղիկներ են խոնարհում 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված համագյուղացիներ Հարություն Կիրակոսյանի և Սերոբ Վարդանյանի հիշատակին նվիրված* |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *,այցելում գերեզմանատուն* |
| 11.<<Գիրք նվիրելու տոն>> | 19.02.2022թ | | *Գրադարանավարի աշխատակիցները կազմակերպել են միջոցառում* |
| 12.Քաղպաշտպանության օր | 01.03.2022թ | *1-12-րդ դասարաններ* | *1-12-րդ դասարանի աշակերտները ռազմագիտության ուսուցչի նախաձեռնությամբ անցկացնում են քաղպաշտմանության օրվան նվիրված ուսումնավարժություն* |
| Զինվորական ծառայության նկատմամբ գրավչությունը բարձրացնելու և կրտսեր սպայական մասնագետների առկա և հեռանկարային պահանջարկի բավարարմանն ուղղված աշխատանքները խթանելու նպատակով մարտի 4-ին Նորաշենի | 04.03.2022թ | *Ավագ դպրոցի աշակերտներ* | *Ռազմագիտության ուսուցչի և տնօրինության ղեկավարությամբ տարվում են ժողովներ,քննարկումներ* |

| | | | |
|---|---|---|---|
| Ավ. Իսահակյանի անվամ միջն. դպրոցի տնօրենությունը կազմակերպեց ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցին նվիրված դաս,որը աշակերտներին կօգնի մասնագիտական կողմնորոշմամբ զինվորական ծառայություն ընտրելու հարցում | | | *աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցերում* |
| 12 ,,Մեր տան աստվածն է մայրս,, | 2022թ. ապրիլ | *10 տոկոս* | *Աշխորհի անդամների նախաձեռնությամբ իրականցավում են ձնավորման,կազմակերպական հարցեր* |
| 12. Համապետական շաբաթօրյակ | 28.05.2022թ | *1-12-րդ դասարան* | *1-12-րդ դասարանի աշակերտները, ուսուցչական անձնակազմը և տեխաշխատողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել շաբաթօրյակի աշխատանքներին:* |

<table>
<tr><td>13. Էքսկուրսիաների կազմակերպում</td><td>2021-2022 ուս ընթացքում</td><td></td><td>Ուս.ընթացքում կազմակերպվում և իրականացվում են բազմաբնույթ և բազմաբովանդակ էքսկուրսիաներ :Աձակերտները այցելում են տեսարժան վայրեր,մշակութային կերտրոններ,ժամանցի և զվարձանքի կենտրոններ:</td></tr>
<tr><td colspan="4">Նկարագրել աշակերտական խորհրդի գործունեության սկզբունքները և ձևերը՝ համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին</td></tr>
<tr><td colspan="4">Աշակերտական խորհրդի գուծունեության հիմնական խնդիրները կապված են սովորողների ինքնավարության հետ: Այդ աշխատանքները նպաստում են համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության,մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը ինչպես նաև ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը: Աշխորհը նպաստում է սովորողների ինքնադրսևորմանը, բարենպաստ պայմաններ ստեղծում կարծիքի ազատ արտահայտման համար:</td></tr>
</table>

*Դպրոցում  տարեցտարի ավելի կարևորվում է աշակերտական խորհրդի գործնեությունը: Ծնողների, հասարակության տնօրենության հետ համագործակցելով աշակերտական խորհուրդը հստակորեն ներկայացնում է աշակերտների խնդիրները և պգնում դրանց լուծման գործում:Շարունակվում է նրանց անմիջական մասնակցությունը դպրոցի ամենօրյա հերթապահությանը, նրանց միջոցառումններում ավելի է ընդգծվում մեր օրերում գիտելիքի կարևորությունը: Աշակերտական խորհրդի ուժերով պարբերաբար թարմացվում են պատի թերթերը:*

*Դասարանական կոլեկտիվները ավելի լրջորեն են վերաբերվում իրենց կողմից աշխորհրդի թեկնածուի ընտրությանը:*

***Աղյուսակ 32 Տվյալներ հաստատության ծնողականխորհրդի գործունեության վերաբերյալ***

| | | | |
|---|---|---|---|
| Նորաշենի միջն. դպրոցում մշտապես կազմակերպվում և անցկացվում են դպրոցում դաստիարակության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը ուղղված միջոցառումներ, համակարգվում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները: Կազմակերպվում են միջոցառումներ , կոնֆերանսներ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Կազմակերպված դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունն ապահովում են դպրոցի և սովորողների ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: 2019-20 ուս-տարվա համարկազմվել է ՄԿԱ գծով տեղակալի տարեկան պլանը, համադպրոցական միջոցառումների պլան, ուսուցիչների հերթապահության ցուցակ, դասղեկների դասղեկական ժամերի գրաֆիկ, ինչպես նաև դասղեկների դասղեկի ժամերի բաց պարապմունքների թեման և օրերը, արտադասարանական խմբակների պարապմունքների գրաֆիկ, դպրոցական ծնողխորհրդի կազմը, դպրոցի գեղագիտական և սպորտային խմբակների մասնակցող աշակերտների ցուցակ, աշակերտական խորհրդի կազմ և այլն: | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 1. Սեպտեմբերի 1-ին նվիրված միջոցառում “Ողջույն քեզ, դպրո՛ց” խորագրով: Միջոցառումը կազմակերպել են XIIա և XIIբ դաս. և դասղեկները: Նրանց նպատակն է 1. Գնահատել գիտելիքի դերը մարդու կյանքում, 2. Աշակերտների մեջ սերմանել հարգանք ուսուցչի աշխատանքի նկատմամբ, և ամենակարևորը ընդունել I դասարանցիների մուտքը դպրոց: Գեղեցիկ զարդարված դպրոցի բակում տիրում է տոնական տրամադրություն: Դպրոցի աշակերտները և ուսուցիչները սկսում են նոր ուսումնական տարքն: | **31.08. 2021.** | **1-ին և 12-րդ դասարանի աշ.** | |
| 2. Սեպտեմբերի 21-ը ՀՀ անկախության օրն է: Անկախության 31 ամյակը մեծ շուքով տոնվում է: Դպրոցում տոնական տրամադրություն է: Միջոցառումը, որը կրում է “Դու հավերժող իմ Հայաստան” խորագիրը կազմակերպել է դակ. կազմակերպիչ Մ. Հախվերդյանը: Միջոցառմանը մասնակցում են տարիքային տարբեր խմբեր: Միջոցառման նպատակն է երեխաների մեջ դաստիարակել հայրենասիրություն, հավատ սեփական երկրի ու ժողովրդի հանդեպ: | **22.09. 2021թ** | **25աշ** | |
| 3. Հոկտեմբեր ամիսը նշանավոր է ուսուցիչների համար, որովհետև այդ ամսվա 5-ին տոնում են ուսուցչի օրը: Ավանդույթի համաձայն այս տարի էլ դպրոցը մեծ շուքով տոնեց ուսուցչի օրը: | **5.10. 2021** | **8-րդ դասարանի աշ** | |
| | **2021-22 ուստարի** | **2021-2022ուս տարի** | **2021-2022ուս տարի** |
| 4. Աշունը նշանավոր է իր խայտաբղետ գույներով: Այս տարի դպրոցում ստեղծել են “Մինի այգի”: Սա այն այգին է, որը մշակվում էր աշակերտների ձեռքերով: Աշակերտները մշակեցին սմբուկ, պղպեղ և լոլիկ, իսկ հետո նրանք պահածոյացրին բանջարեղենը: Ծրագրի ղեկավարներ Հ. Հակոբյանը և Վ. Ավետիսյանը ջանք չխնայեցին աջակցելու ծրագրի կատարմանը: | **2021 աշուն** | | |
| 5. Նոր տարվա դիմակահանդեսին մասնակցում են | **24.12.21** | **աշխոըհ** | |

| | | | |
|---|---|---|---|
| միջին և բարձր դասարանների աշակերտները: Խայտաբղետ հագուստները առանձնակի ուշադրություն են հրավիրում իրենց վրա: Երեխաները իրենց ձեռքով էին պատրաստել դիմակները և հագուստները: Երեխաները մեծ բավականություն և հաճույք զգացին այդ միջոցառումից, հատկապես փոքրիկները, երբ ստացան Ձմեռ պապիկի նվերները: | 1 | | |
| 6. Հերթական միջոցառումը նվիրված է Հայկական բանակի 30 ամյակին “Մեզ բացակա չդնեք” խորագրով: Միջոցառման նպատակն է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Միջոցառումը, որտեղ մասնակցում են տարբեր տարիքային խմբերի աշակերտներ, ներկայացնում են Հայաստան աշխարհի բնանկարը, խաղաղ պայմաններում ստեղծագործ հայ ժողովրդի աշխատանքը, մարտունակ բանակի ստեղծման անհրաժեշտությունը, բանակի ստեղծման պատմությունը, նորաշենցիների մասնակցությունը այդ պատերազմին: 44 օրյա պատերազմին Նորաշեն համայնքի բնակիչներ Սերոբ Վարդանյանի, Հարութ Կիրակոսյանի անմահ փառքի մասին: | **29.01.<br>2022թ** | **5-8-րդ դասար անի աշ.** | |
| 7. Հունվար ամսին X և XIբ դասարաններում (դասղեկներ Հ. Հակոբյան, Վ. Ավետիսյան) անցկացվեց “Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը մարդու առողջության վրա” խորագրով գիտական կոնֆերանս: Կոնֆերանսի էությունը ներկայացրին ուսուցիչները՝ կարդալով կարճ դասախոսություն: Իսկ աշակերտները | **2022թ հունվա ր** | **10-11-րդ դասար անցինե ր** | |

| | | | |
|---|---|---|---|
| ներկայացրին ինֆորմացիա՝ պատմական ակնարկ, թմրամիջոցների շուկա, թմրամիջոցների գիտական բնորոշում, թմրամոլություն, թմրամիջոցների տեսակները, պաթոգենեզ, բուժում թեմաների վերաբերյալ: Կոնֆերանսի վերջում աշակերտների մոտ արդեն ձևավորվեց ո՚չ թմրանյութերին ասելու կարողություն: | | | |
| Դպրոցի ուշադրության կենտրոնում է Հայաստանի Հանրապետության թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը: 2021-22 ուս. տարվա ընթացքում դպրոցում անցկացվել են մի շարք միջոցառումներ տարբեր տարիքային խմբերում:<br>X-XIIդդ.  - սեմինար - Գիտագործական կոնֆերանս.  «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի՝ 2020թ. կառավարության ներկայացրած միջոցառումների ծրագրի մասսայականացում»<br>X-XIIդդ.  - սեմինար - Հանդիպում բժշկի հետ: «Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը մարդու առողջության վրա»<br>IX-Xդդ.  - սեմինար – «ԶԼՄ-ների դերը թմրամոլության դեմ պայքարի գործում»<br>VIII-XIIդդ.  – սեմինար - Նախազորակոչային տարիքի սովորողների և զինծառայողների շրջանում թմրամոլության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման և իրավապահ մարմինների հետ համագործակցությունը:<br>VII-Xդդ.  - Գիտագործական կոնֆերանս - Զեկուցում-ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում:<br>Առողջ ապրելակերպի արմատավորումը | 2021-<br>2022ուս | | |

| | | | |
|---|---|---|---|
| հանրության մեջ՝ սկսած դպրոցից:<br>Անչափահասների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի գործածման վնասները:<br>XI-XIIդդ. - սեմինար - Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտեր, ՄԱԿ-ի կոնվեցիա և միջազգային փաստաթղթերի դրույթներ Թմրամոլության քրեաիրավական պատասխանատվությունը օրենքի դաշտում:<br>X-XIIդդ. -հանդիպում - Հանդիպում ոստիկանի հետ՝ «ՀՀ-ում թմրամոլության և թմրաբիզնեսի միջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունը՝ կապված հանցագործության հետ»:<br>Աշխորի - զեկուցում - «Թմրամոլության և դրա հասցրած վնասները անչափահասների շրջանում»:<br>Ծնողխորհուրդ – զեկուցում – Բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, հանրության իրազեկում, բնակչության լայն խավերին սպորտի պարապմունքներում ներգրավվում, առողջության ամրապնդում, ֆիզիկական պատրաստականություն և սպորտի դերի բարձրացում:<br>VII-IXդդ. - Դասղեկի ժամ - Դասղեկի բաց պարապմունքներ. «վատ սովորություններ» խորագրով<br>1. Բույսերից պատրաստվող թմրամիջոցները և դրանց շրջանառությունը<br>2. Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը անչափահասների առողջության վրա<br>3. Հունիսի 26-ը թմրանյութերի դեմ պայքարի օր<br>4. Հոգեմետ դեղեր մեթամֆետամինը և ափիոնը որպես ծանր հետևանք ունեցող դեղամիջոցներ:<br>5. Թմրամոլությունը՝ մարդկային աղետ տարվա ընթացքում՞<br>X-XII դաս | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 6. Թմրամոլությունը հիվանդություն չէ. Ինչպե՞ս ազատվել դրանից<br>7. Թմրամոլությունը հիվանդություն է, լավագույն բուժումը՝ կանխումը<br>8. Թմրամոլություն, կործանված կյանք ու քայքայվող ընտանիքներ<br>9. Թմրամոլությունը թակարդից դեպի Աստծո արքայություն<br>10. Թմրամոլությունը՝ որպես հասարակական չարիք<br>11. Հեռու և մոտիկ վտանգը<br>12. Երիտասարդները ընդեմ թմրամոլության: | | | |
| Մեծ աշխատանք է կատարվել դասղեկների հետ համատեղ երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար: Ուսման առաջադիմությունը բարձրացնելու և մտահորիզոնը լայնացնելու հիմքում ընկած է գեղարվեստական գրականություն ընթերցելու կարողությունը:<br>Ուս. տարվա ընթացքում այցելել ենք դասարաններ, ստուգել դասագրքերի վիճակը:<br>Տարվա ընթացքում գրադարանում հաճախակի տեղի է ունեցել ընթերցանության ժամեր, տարրական օղակի համար մեր կողմից ընթերցվել է տարբեր հեղինակների հեքիաթներ:<br>Հոկտեմբերի 7-ին՝ գրադարանավարի օրվա առթիվ մենք հյուրընկալեցինք դպրոցին կից գործող քոլեջի փոքրիկներին: Այդ օրը նրանք մեզ համար պատրաստել էին հաճելի անակնկալ փոքրիկ միջոցառման տեսքով, մեզ նվիրեցին իրենց ձեռքով պատրաստած գեղեցիկ բացիկներ: Այդ օրը երեխաները շրջեցին գրադարանում ծանոթացան գրքերի հետ:<br>Փետրվարի 19-ին՝ Հ. Թումանյանի ծննդյան օրը, նշվում է նաև գիրք նվիրելու օրը: Տոնի գիտակցությունն արդեն առկա է և այն գնալով ավելի է իմաստավորվում՝<br>գիրքը դիտարկելով որպես հոգևոր և մշակութային անփոխարինելի արժեք: Այդ օրը | | | |

| | | | |
|---|---|---|---|
| գրադարանում գրադանավարների կողմից կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում, Vա և Vբ դդ. մասնակցությամբ: Բոլոր դասագրքերը դասավորվել և հաշվառվել են, նորոգվել և սոսնձվել են:<br>Մայիս ամսին դասղեկների և ծնողների հետ միասին, սովորողներից հավաքվել է նրանց հատկացված բոլոր դասագրքերը:<br>Ամառային արձակուրդի ընթացքում աշակերտներին տրամադրվել է գեղ. գրականություն և ուսումնական թեմաներին համապատասխան գրականություն ըստ օղակների:<br>Գրադարանը այն կարևոր օղակն է, որը կանոնակարգված կազմակերպելով երեխաների ընթերցանությունը, սեր և հետաքրքրություն է առաջացնում գրքի նկատմամբ, այն նպաստում է ուսման առաջադիմության բարձրացմանը:<br>Սեպտեմբեր ամսին դպրոցի 418 աշակերտներին բաժանվել են դասագրքեր, որոնք օգտագործվել են ամբողջ տարվա ընթացքում:<br>2021-2022թթ. ուս. տարում գրադարանի ընթերցողների մեջ ընդգրկված է եղել շուրջ 60 աշակերտ: Նրանք ունեն ընթերցողական քարտեր:<br>Դասագրքերի գումարը հավաքվել է ժամանակին և ԴՏՀՏԾՀ է մուծվել 1.436.610դ., որի վճարման դրամարկղի մուտքի օրդերները և բանկային հաշիվների քաղվածքները պահպանվում են: (1-4-րդ դասարանների դասագրքերը ֆինանսական հաշվետվության մեջ չեն մտնում): Պետությունը օգնության կարգով դպրոցին հատկացվել է 158.900դ., որը բաշխվել է ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին, թվով 39 աշակերտ:<br>Դպրոցի գրադարանի, ուսուցչանոցի և դասարանների պատին ամրացվել է էլեկտրոնային դասագրքերից օգտվելու QR կոդերը: | | | |
| 8. Միջոցառումը, որը նվիրված էր գիրք նվիրելու և | **21.02.** | | |

| | | | |
|---|---|---|---|
| մայրենիի օրվա, կազմակերպել էր փոխտնօրեն Ս. Հակոբյանը՝ "Եվ Մեսրոպի սուրբ հանճարով" վերնագրով: Միջոցառման նպատակն է երեխաների մեջ դաստիարակել հայեցիություն, սեր մայրենի լեզվի նկատմամբ: Միջոցառման ժամանակագրությունը հարուստ էր և բովանդակալից: | 2022թ. | | |
| 9. Գեղեցիկ միջոցառում էին կազմակերպել գրադարանավարներ Գյուլնարա Կիրակոսյանը և Գայանե Հակոբյանը: Միջոցառումը նվիրված էր "Գիրք նվիրելու օրվան": Միջոցառման նպատակն էր ներկայացնել՝ գիրք նվիրելու օրվա խորհուրդը, տոնի նպատակը, գրքի դերը մարդու կյանքում, գրքի տեսակները: | 19.02.20 22թ | | |
| 10. Մարտի 1-ը քաղաքացիական պաշտպանության օրն է: Ամեն տարի այդ օրը դպրոցում անցկացվում է համադպրոցական միջոցառում: Միջոցառման նպատակն է երեխաներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին: | 01.03.20 22թ. | | |
| 11. Գեղեցիկ միջոցառում էին կազմակերպել ՄԿԱ և դակ կազմակերպիչներ Ա. Ստեփանյանը և Մ. Հախվերդյանը "Մեր տան աստվածն է մայրս" խորագրով: Մասնակցում էին համարյա բոլոր տարիքային խմբերը: Միջոցառումը անցավ ուրախ և բովանդակալից միջավայրում: | 07.07.20 22թ. | | |
| 12. Շատ հաճելի միջոցառում են կազմակերպել դասվարներ Ն. Խաչատրյանը և Ա. Ասատրյանը: Երեխաները հրաժեշտ տվեցին Այբբենարանին և արդեն տառաճանաչ լինելով պատրաստ էին ընդունել "Մայրենի" դասագրքին: | | | |
| 13. Շատ հուզիչ և գեղեցիկ ներկայացրին XIIա և XIIբ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| դդ. իրենց "Վերջին զանգ" հանդեսը: Դասղեկներ Կ. Հովնաթանյանը և Ա. Բաբայանը ամեն ինչ արել էին, որ միջոցառումը անցներ հետաքրքիր և ուսանելի: | | | |
| 3. VIIIա և VIIIբ դդ. դասղեկներ Մ. Հակոբյանը և Ն. Մանուկյանը ջանք չէին խնայել, որպեսզի միջոցառումը մատուցվեր հավուր պատշաճի: Աշակերտները մեծ ոգևորությամբ էին ներկայացնում իրենց երգերն ու բանաստեղծությունները: | | | |
| Տոնական տրամադրություն է տիրում IVա դաս. (դասվար՝ Ա. Հովսեփյան): Աշակերտները պատրաստվում են տոնել Սուրբ Հարության տոնը կամ Զատիկը: Միջոցառման նպատակն է ներկայացնել Զատկի տոնի խորհուրդը, զատկական ազգային-ծիսական ավանդույթները, պահպանել և փոխանցել սերունդներին: Հին հայկական ավանդական հագուստները, որոնք մի առանձին խորհուրդ են հաղորդում երեխաներին, նրանք երգում, պարում և արտասանում են, պատմում ավանդական զրույցներ, ներկայացնում բեմադրություն ավանդական տիկնիկներով, որոնք պատրաստել են իրենց ձեռքով: | | | |
| **Դպրոցում անցկացվող դասղեկի բաց պարապմունքները (I-XI դասարաններում) նպաստում են դասղեկների կողմից աշակերտների դաստիարակչական աշխատանքները էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:** | | | |
| 1. ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ալ. Իսահակյանի անվան միջն. դպրոց ՊՈԱԿ-ի հողամասում հիմնված են ծիրանի, սալորի, դեղձի այգիներ, որոնք մշակվում | | | |

| | | | |
|---|---|---|---|
| են այգեպանի, տնտեսվարի, դպրոցի աշխատակիցների կողմից: “Մինի այգի” ծրագրին մասնակցելու համար դպրոցում հողահատկացում է կատարվել: Նոր հողատարածքը 5•10 քմ նախատեսված է բանջարեղեն աճեցնելու համար, քանի որ “դպրոցական սնունդ” ծրագրի շրջանակներում բանջարեղենը անհրաժեշտություն է: Հողամասում մշակվել է լոլիկ, վարունգ, գազար, հազար, ճակնդեղ, կանաչի, բամիա, սմբուկ, լոբի, պղպեղ: Վիտամիններով հարուստ այս բանջարեղենը կներառվի “Դպրոցական սնունդ” ծրագրի մեջ որպես բանջարեղենային թարմ աղցաններ: | | | |
| Դ/բ/պ է VIIIա դաս. թեման “Ուսուցչի օր” (դասղեկ՝ Ն. Մանուկյան): Աշակերտները տեղեկություններ էին պատրաստել ուսուցչի դժվար, բայց շնորհակալ աշխատանքի մասին: Դրան հետևեց երգերն ու բարեմաղթանքները, որոնք պատրաստել էին աշակերտները իրենց ուսուցիչների համար: | | | |
| Դ/բ/պ է VIIIբ դաս (դասղեկ՝ Մ. Հակոբյան): Այս դասը նույնպես նվիրված էր “Ուսուցչի օրվան”: | | | |
| Դ/բ/պ է XIբ դաս (դասղեկ՝ Հ. Հակոբյան): «Արտագաղթը ազգի մեծագույն չարիք է» թեմայով: Դասի նպատակն է ներկայացնել արտագաղթը, որպես ազգի չարիք է: Աշակերտները կարդում են իրենց գրած շարադրությունները պանդխտության վերաբերյալ, մտաբերում են պանդխտության մասին երգեր և բանաստեղծություններ: | | | |
| Դ/բ/պ է IIIբ դաս. (դասվար՝ Ա. Մանասյան)”Բարեկիրթ վարվելակերպ” վերնագրով: Դասի նպատակն էր երեխաներին բացատրել բարեկրթության որակների դերի և նդանակության մասին, վարքի կանոնների էության մասին: Կարողանան արժևորել և կիրառել վարքի կանոնները առօրյայում: | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Դ/բ/պ է VII դաս. “Ընտանիք և պարտականություն” թեմայով (դասղեկ՝ Տ. Հախնազարյան): Դասի նպատակն է կարևորել ընտանիքի դերը, սահմանել ընտանիք հասկացությունը, ճանաչել ընտանիքի հանդեպ ունեցած պարտականությունները: | | | |
| Դ/բ/պ է IVա դաս. (դասվար՝ Ա. Հովսեփյան): Դասի թեման է “Բնական աղետներ”: Դասի նպատակն է երեխաների մոտ դաստիարակել բնության նկատմամբ պատասխանատվություն։ Սեփական արարքների և հետևանքների գիտակցման միջոցով ձևավորել էկոլոգիական դաստիարակության համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ: | | | |
| Դ/բ/պ է IVբ դաս. (դասվար՝ Հ. Պողոսյան):<br>Սա միայն դաս չէր, այլ դաս-միջոցառում “Հավերժի ճամփորդը” խորագրով։ Ամբողջ դասի ընթացքում երեխաները կարծես մեծացել էին մի քանի տարով։ Նրանք այնպես էին ներկայացնում հայ ժողովրդի պատմական ուղին և տեղը համաշխարհային արենայում, որ կարելի է մտածել երեխաները եկել են այդ դարերից։ Դաս-միջոցառումը ուներ հայրենասիրական, դաստիարակչական և խորը վերլուծական նպատակներ: | | | |
| Դ/բ/պ է X և XIբ դդ. : Թեման է "Թմրամոլությունը չարիք է": Դասղեկներ՝ Հ. Հակոբյանը և Վ. Ավետիսյանը մանրամասն դասախոսության ձևով ներկայացրին թմրամոլության աղետալի հատկությունները, ներկայացրին օրինակներ թմրամոլների կյանքից, դիտեցին ֆիլմեր, որտեղ ներկայացված էր թմրամոլների կյանքից դրվագներ։ Դասղեկների նպատակն է երեխաների մեջ դաստիարակել,<br>սերմանել և ամրապնդել այդ չարիքի դեմ բացասական վերաբերմունք և պայքարի ցանկություն: | | | |
| Դ/բ/պ է VII դաս. : Դասը նվիրված է Հայոց բանակին։ Աշակերտները ներկայացնում են բանակի կազմավորման պատմությունը, նվիրում երգեր և բանաստեղծություններ հայոց բանակին։ Ուսուցչի նպատակն է երեխաների մեջ դաստիարակել ռազմահայրենասիրական ոգի: | | | |
| Դ/բ/պ է II դաս. (դասվար՝ Կ. Բարեղամյան) "Հացը" թեմայով։ Ուսուցչուհու նպատակն է ներկայացնել աշակերտներին հացը որպես արժեք։ Երեխաները | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ներկայացրին հացի ստեղծման, արտադրման և անցած ճանապարհի մասին: Ավանդական հայկական լավաշը նրանք ներկայացնում են որպես հայ ժողովրդի գոյատևման և միջազգային արենայում ներկայանալի արժեք: | | | |
| Դ/բ/պ է Iա դասարանում (դասվար՝ Ն. Խաչատրյան) "Գարուն" թեմայով: Դասի նպատակն է բացահայտել ձեռք բերված գիտելիքները ներկայացնելու կարողություններն ու հմտությունները, դաստիարակել սեր դեպի բնությունը, զարգացնել երեխաների համ… | | | |
| Դ/բ/պ է VIIIա դաս. (դասղեկ՝ Ն. Մանուկյան): Դասի թեման է "Պահպանենք շրջակա միջավայրը": Դասի ընթացքում ուսուցիչը կիրառել է նոր տեխնոլոգիաներ: Դասի նպատակն է պարզել, թե ինչ մակարդակով են պատկերացնում թեման: Դրա համար անհրաժեշտ է ունենալ սեփական մտածելակերպ, անել մաքրություն պահպանման կուլտուրա: Երեխաներով շատ գեղեցիկ և գրագետ ներկայացրին թեմային վերաբերվող լրացուցիչ տեղեկություններ: Դ/բ/պ է VIա դաս. (դասղեկ՝ Հ. Սարգսյան): Թեման՝ "Հանդիպում քահանայի հետ": Երեխաները այցելեցին եկեղեցի, որտեղ հանդիպեցին քահանայի հետ: Քահանան տեղեկություններ հաղորդեց եկեղեցու պատմությունից, այնուհետև պատասխանեց երեխաների հարցերին: | | | |
| **Արտադասարանական աշխատանքները լինելով դպրոցական գործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Դպրոցում գործում են 3 արտադասարանական խմակներ՝ «Նորաշեն» մարզական խմբակը ղեկավար՝ Վ.Հովսեփյանը, «Հմուտ ձեռքեր» խմբակը ղեկավար՝ Սրբ.Սահակյան, «Սովորում ենք գերմաներեն» գերմաներենի խմբակը ղեկավարը՝ Գ.Հակոբյան:**<br>**Ուսումնական տարվա ընթացքում խմբակները աշխատել են շաբաթական 3 ժամ և ունեցել շոշափելի հաջողություններ:** | | | |
| Օրինակ՝ «Նորաշեն» խմբակի հիմքի վրա ստեղծվել է «Նորաշեն» վոլեյբոլի թիմը, որը մասնակցել է մրցաշարերին և դարձել է հաղթող: | | | |

| | | | |
|---|---|---|---|
| «Հմուտ ձեռքեր» խմբակի նպատակն է եղել սովորողների մոտ ստեղծագործական մտածողության զարգացմանը և գեղագիտական ճաշակի ապահովմանը։<br>Հաջորդ խմբակը «Սովորում ենք գերմաներեն» խմբակն է։ Այս խմբակն էլ լավ ավանդույթների վրա հիմնված խմբակ է, որը ղեկավարում է հմուտ և փորձառու ուսուցիչ ընկ.Գ. Հակոբյանը։<br>Պարապմունքների ժամանակ սովորում են գերմաներեն քերականություն, հարստացնում են բառապաշարը, ինչպես նաև սովորում են ճիշտ և գեղեցիկ խոսել գերմաներենով: | | | |
| **Դպրոցական գործի անբաժանելի մաս է կազմում ծնողական խորհրդի անդամների կատարած աշխատանքը։ Դեռևս ուս. տարվա սկզբից գումարվել է խորհրդի նիստ, որտեղ կազմվել է ծնողխորհրդի 2021-2022թթ. ուս. տարվա աշխատանքային պլան, որի համաձայն ամիսը 1 անգամ գումարվել է ծնողխորհրդի նիստ, որտեղ քննարկվել է ամենատարբեր հարցեր կապված դպրոցական գործընթացի հետ։ Նիստերի ընթացքում քննարկվել և հաստատվել են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բյուջեի քննարկումն ու հաստատումը:** | | | |
| | | | |
| Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատամամբ. | 6 | 7 | 8 |
| Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը | 55 | 55 | 55 |
| Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին | - | - | |

| | | | |
|---|---|---|---|
| խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը | | | - |
| Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում | 9 | 9 | 9 |
| Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում | 7 | 7 | 7 |
| Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը. | 24 | 35 | 40 |
